ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2019
02.2019
03.2019
04.2019
05.2019
06.2019
07.2019
Հուլիս
08.2019
09.2019
10.2019
11.2019
12.2019

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 26-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2019

Հուլիս

թիվ 7 (251)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-85-Ն ՀՀ օրենքը

5 «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-93-Ն ՀՀ օրենքը

8 «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-94-Ն ՀՀ օրենքը

9 «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-95-Ն ՀՀ օրենքը

10 «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-108-Ն ՀՀ օրենքը

11 «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-109-Ն ՀՀ օրենքը

12 «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-110-Ն ՀՀ օրենքը

13 «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-111-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

15 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՀՕՍ ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ գրավատնային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին

15 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Կոնվերս Բանկ» ՓԲԸ «Արշակունյաց» մասնաճյուղը, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Զվարթնոց» մասնաճյուղը, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «ԱՐԱՐԱՏ» մասնաճյուղը գրանցելու մասին

15 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 7 գրավատան, 1 վարկային կազմակերպության, 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու, 3 գրավատան նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

15 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 99Լ որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

16 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին***

Հոդված 1. «Սպառողական կրեդիտավորման մասին» 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-122-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) տասնհինգ միլիոն դրամը գերազանցող կրեդիտավորման պայմանագրերի վրա.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
03 հուլիսի 2019 թ., Երևան, ՀՕ-85-Ն

* *ՀՀՊՏ 2008 N 47 (637), 20.07.08:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2019 թվականի հունիսի 19-ին (ՀՀՊՏ N 45 (1498), 10.07.19):

«Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին***

Հոդված 1. «Սպառողական կրեդիտավորման մասին» 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-122-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենքը տարածվում է նաև մինչև 5.000.000 դրամի չափով (ներառյալ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը) և (կամ) դրան համարժեք արտարժույթով տրամադրված գյուղատնտեսական նշանակության և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված՝ գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մինչև 5.000.000 դրամի չափով (ներառյալ՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը) և (կամ) դրան համարժեք արտարժույթով տրամադրված կրեդիտների վրա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:»:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) ***սպառող***՝

ա. անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքներ (աշխատանքներ, ծառայություններ) պատվիրելու կամ ձեռք բերելու նպատակով կրեդիտ ստացող ֆիզիկական անձ,

բ. գյուղատնտեսական նշանակության կրեդիտ ստացող ֆիզիկական անձ կամ գյուղատնտեսական նշանակության կրեդիտ ստացող անհատ ձեռնարկատեր,

գ. կրեդիտ ստացող՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված գերփոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր.»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «հարյուր հազար դրամը չգերազանցող և» բառերը:

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «փոստային» բառը փոխարինել «էլեկտրոնային» բառով.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կրեդիտավորողը պարտավոր է իր կողմից կամ կրեդիտավորման պայմանագրով սահմանված պարբերականությամբ, որը չպետք է գերազանցի մեկ ամիսը, սպառողին ներկայացնել կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, այդ թվում՝ սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող կամ կիրառված պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների) սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը՝ էլեկտրոնային կապի միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի: Ընդ որում, սույն մասում նշված տեղեկատվությունը համարվում է պարտադիր ներկայացման տեղեկատվություն:».

---

* *ՀՀՊՏ 2008 N 47 (637), 23.07.08:*

** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2019 թվականի հունիսի 19-ին (ՀՀՊՏ N 45 (1498), 10.07.19):

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սպառողը գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունն էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Սպառողն իրավունք ունի նաև սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունն ստանալու կրեդիտավորողի տարածքում՝ առձեռն, որը չի բացառում նույն տեղեկատվությունն սպառողին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով տրամադրելու՝ կրեդիտավորողի պարտականությունը: Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված էլեկտրոնային, փոստային կամ կապի այլ միջոցներով և առձեռն ստանալու սպառողի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է:

Ընդ որում, կրեդիտավորողն իրավունք չունի սպառողին պարտադրելու կամ սպառողի համար այնպիսի իրավիճակ ստեղծելու, որ սպառողը հրաժարվի սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունն էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իր իրավունքից:».

4) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 20 Կրեդիտավորողի պատասխանատվությունն սպառողի առաջ

1. Այն դեպքում, երբ կրեդիտավորողի կողմից խախտվել է սպառողի՝ սույն օրենքով կամ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված որևէ իրավունք, ապա սպառողն իրավունք ունի անմիջապես դիմելու դատարան, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ առևտրային արբիտրաժ, ինչպես նաև Ֆինանսական համակարգի հաշտարարին:

2. «Կրեդիտավորողի ծառայություններից օգտվող սպառողի իրավունքների խախտման փաստը հաստատվելու դեպքում դատարանի վճռով, առևտրային արբիտրաժի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշմամբ հօգուտ սպառողի գանձվում է երեք հարյուր հազար դրամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու օրվա դրությամբ՝

1) կրեդիտավորողը ձեռնարկել է սպառողի խախտված իրավունքը վերականգնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները և փաստացի վերացրել է սպառողի իրավունքի խախտումը, և

2) սպառողի իրավունքի խախտման հետևանքով սպառողը փաստացի չի կրել նյութական վնաս, իսկ վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է կրեդիտավորողը:

Ընդ որում, սույն հոդվածով նախատեսված սպառողի իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու՝ սպառողի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ:

3. Եթե կրեդիտավորողը կրեդիտավորման պայմանագրում չի ներառել սույն օրենքի 4-րդ հոդվածով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով նախատեսված՝ կրեդիտավորման պայմանագրում ներառման ենթակա նվազագույն տեղեկությունները (պայմանները), ապա կրեդիտավորողն իր նախաձեռնությամբ կամ սպառողի պահանջով պարտավոր է կրեդիտավորման պայմանագիրը համապատասխանեցնել սույն օրենքի 4-րդ հոդվածով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտով նախատեսված պահանջներին՝ խախտումը հայտնաբերելու կամ սպառողի պահանջը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Կրեդիտավորման պայմանագիրը սույն օրենքի 4-րդ հոդվածով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պահանջներին համապատասխանեցնելու հետ կապված բոլոր ծախսերը կրում է կրեդիտավորողը:»:

Հոդված 6. **Անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո: Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնե-

լու օրը և դրանից հետո կնքված պայմանագրերի և դրանցից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածով փոփոխվող 20-րդ հոդվածի 2-րդ մասը տարածվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կնքված այն կրեդիտավորման պայմանագրերի և դրանցից ծագած հարաբերությունների վրա, որոնց խախտումները տեղի են ունեցել սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
03 հուլիսի 2019 թ., Երևան, ՀՕ-93-Ն

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին***

Հոդված 1. «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-135-Ն օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 5.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.1. Հայաստանի Հանրապետության տարածքում փոխառությունները կարող են տրամադրվել նաև արտարժույթով, բացառությամբ սպառողական փոխառությունների, որոնք տրամադրվում են բացառապես Հայաստանի Հանրապետության դրամով:

Մինչև 5.000.000 դրամի չափով (ներառյալ՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը) տրամադրվող գյուղատնտեսական նշանակության և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված՝ գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մինչև 5.000.000 դրամի չափով (ներառյալ՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը) տրամադրված կրեդիտները կարող են տրամադրվել ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:».

2) 8.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8.1. Բանկերը և վարկային կազմակերպություններն սպառողական փոխառությունները ու վարկերը տրամադրում են միայն Հայաստանի Հանրապետության դրամով:

Մինչև 5.000.000 դրամի չափով (ներառյալ՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը) տրամադրվող գյուղատնտեսական նշանակության և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված՝ գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին տրամադրված մինչև 5.000.000 դրամի չափով (ներառյալ՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը) կրեդիտները կարող են տրամադրվել ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո: Սույն օրենքի գործողությունը տարածվում է օրենքն ուժի մեջ մտնելու օրը և դրանից հետո կնքված պայմանագրերի և դրանցից ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
03 հուլիսի 2019 թ., Երևան, ՀՕ-94-Ն

* *ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2019 թվականի հունիսի 19-ին (ՀՀՊՏ N 45 (1498), 10.07.19):

«Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին***

Հոդված 1. «Վարկային կազմակերպությունների մասին» 2002 թվականի մայիսի 29-ի ՀՕ-359-Ն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սպառողական վարկի կամ փոխառության տրամադրում են համարվում այն գործարքի կնքումն ու կատարումը, որով պարտապանը տվյալ գործարքով ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես սպառողական նպատակներով, որոնք կապված չեն իր ձեռնարկատիրական գործունեության հետ, բացառությամբ մինչև 5.000.000 դրամի չափով (ներառյալ՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը) և (կամ) դրան համարժեք արտարժույթով տրամադրված գյուղատնտեսական նշանակության և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված՝ գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին տրամադրված մինչև 5.000.000 դրամի չափով (ներառյալ՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը) վարկի կամ փոխառության:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո: Սույն օրենքի գործողությունը տարածվում է օրենքն ուժի մեջ մտնելու օրը և դրանից հետո կնքված պայմանագրերի և դրանցից ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
03 հուլիսի 2019 թ., Երևան, ՀՕ-95-Ն

* *ՀՀՊՏ 2002 N 23 (198), 03.07.02:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2019 թվականի հունիսի 19-ին (ՀՀՊՏ N 45 (1498), 10.07.19):

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին***

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 88-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Ապահովագրական միջնորդների նշանակալից մասնակիցները չեն կարող լինել դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն ունեցող անձինք, եթե այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ: Ապահովագրական միջնորդները Կենտրոնական բանկ են ներկայացնում սույն մասով նախատեսված տեղեկությունների վերաբերյալ հաշվետվություն՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և ժամկետներում:»:

Հոդված 2. Օրենքի 97-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը «անհատական տվյալների» բառերից հետո լրացնել «, դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն չունենալու (եթե այդ դատվածությունը հանված կամ մարված է օրենքով սահմանված կարգով) մասին գրավոր հայտարարություն» բառերով:

Հոդված 3. Օրենքի 99-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին կետով.

«4.1) նշանակալից մասնակիցներից թեկուզ մեկն ունի դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն, և այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ:»:

Հոդված 4. Օրենքի 103-րդ հոդվածի 1-ին մասում 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «է.1» ենթակետով.

«է.1. Իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, նրանց անհատական տվյալների և մասնակցության չափի մասին տեղեկություններ, նշանակալից մասնակիցների կողմից դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն չունենալու (կամ այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու) մասին գրավոր հայտարարություն,»:

Հոդված 5. Օրենքի 105-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով.

«2.1) դիմումատուի նշանակալից մասնակիցներից թեկուզ մեկն ունի դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն, և այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ.»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
11 հուլիսի 2019 թ., Երևան, ՀՕ-108-Ն

---

* *ՀՀՊՏ 2007 N 27 (551), 30.05.07:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2019 թվականի հունիսի 28-ին (ՀՀՊՏ N 46 (1499), 17.07.19):

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին***

Հոդված 1. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-150-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի «դ» կետում «համար, և որը համակարգի այլ մասնակիցների կողմից լիազորված է իրականացնել քլիրինգ և (կամ) վերջնահաշվարկ» բառերը փոխարինել «և զարգացման համար, և սահմանում է համակարգի կանոնները» բառերով:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը «կարգով» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված վճարահաշվարկային ծառայության, որի պարագայում արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի հետ համագործակցությունն իրականացվում է հայաստանյան վճարահաշվարկային համակարգի միջոցով՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով» բառերով:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը «անձնագրի տվյալները» բառերից հետո լրացնել «,10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցը դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն չունենալու (կամ այդպիսի դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու) մասին գրավոր հայտարարություն» բառերով:

Հոդված 4. Օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե1» կետով.

«ե1) կազմակերպության 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցներից թեկուզ մեկն ունի հանցագործության համար դատվածություն, և այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ.»:

Հոդված 5. Օրենքի 23-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Վճարահաշվարկային կազմակերպության 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցը չի կարող ունենալ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն, եթե այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ: Վճարահաշվարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցների և ղեկավարների մասին սույն մասով նախատեսված տեղեկությունների վերաբերյալ հաշվետվություն՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և ժամկետներում:»:

Հոդված 6. Օրենքի 26-րդ հոդվածի «բ» կետում «աշխատանքի կանոնակարգի» բառերը փոխարինել «գործունեությունը կարգավորող օրենքների և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի» բառերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
11 հուլիսի 2019 թ., Երևան, ՀՕ-109-Ն

---

* *ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2019 թվականի հունիսի 28-ին (ՀՀՊՏ N 46 (1499), 17.07.19):

«Գրավատների և գրավատնային գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին***

Հոդված 1. «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» 2003 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-43-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ը.1» կետով.

«ը.1) չպետք է ունենա դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն (եթե այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ) ունեցող 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակից կամ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն ունեցող ղեկավար.»:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «բ.1» կետով.

«բ.1) հայտատուի 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցներից թեկուզ մեկն ունի դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն, և այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ, կամ ղեկավարն ունի դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն.»:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «բ.1» կետով.

«բ.1) սույն օրենքի 6-րդ հոդվածի «ը.1» կետով նախատեսված՝ 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցների և ղեկավարների՝ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն չունենալու վերաբերյալ հաշվետվություն՝ լիազոր մարմնի սահմանած կարգով և ժամկետներով.»:

Հոդված 4. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետը «սույն օրենքի» բառերից հետո լրացնել «6-րդ հոդվածի «ը.1» մասով սահմանված պայմաններից առնվազն մեկը կամ» բառերով:

Հոդված 5. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը «դ» բառից հետո լրացնել «, «ը.1» բառով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագող հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
11 հուլիսի 2019 թ., Երևան, ՀՕ-110-Ն

* *ՀՀՊՏ 2003 N 64 (299), 3012.03:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2019 թվականի հունիսի 28-ին (ՀՀՊՏ N 46 (1499), 17.07.19):

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին***

Հոդված 1. «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-135-Ն օրենքի (այսուհետ Օրենք) 7.1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող (արժութային դիլեր-բրոքեր) կազմակերպության, արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության կամ դրանց լիցենզիա ստանալու համար դիմած կազմակերպությունների 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցները չպետք է ունենան դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն, և այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ, իսկ դրանց ղեկավարները չպետք է ունենան դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն, եթե այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ: Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող (արժութային դիլեր-բրոքեր) կազմակերպությունը և արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն մասով նախատեսված տեղեկությունների վերաբերյալ հաշվետվություն՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և ժամկետներում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագող հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
11 հուլիսի 2019 թ., Երևան, ՀՕ-111-Ն

---

* *ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2019 թվականի հունիսի 28-ին (ՀՀՊՏ N 46 (1499), 17.07.19):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՀՕՍ ԿՐԵԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիան (որոշում թիվ 96Ա):
- ***Գրանցվել է*** «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Արշակունյաց» մասնաճյուղը, «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Զվարթնոց» մասնաճյուղը, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «ԱՐԱՐԱՏ» մասնաճյուղը (որոշումներ թիվ 1/449Ա,1/452Ա, 1/457Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 7 գրավատան, 1 վարկային կազմակերպության, 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 4250000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/436Ա,1/439Ա,1/442Ա,1/443Ա,1/444Ա,1/466Ա,1/500Ա,1/515Ա, 1/527Ա), 3 գրավատան ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/439Ա, 1/500Ա, 1/515):

ՅԻ ՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2019 թ. հուլիսի 30-ի թիվ 99Լ որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 5.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 7.25%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4.25%:***

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒԼԻՍ 2019)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու Թ Յ Ու Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 20

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների փոփոխություն

Գնաճ

Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 24

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 29

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 30

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 40

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 60
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 70
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 72
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 80
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2019 թ. հունիս*	*2019 թ. հունիսի իրական աճի փոփոխությունը 2018 թ. հունիսի նկատմամբ (%)*	*2019 թ. հուլիս*	*2019 թ. հուլիսի իրական աճի փոփոխությունը 2018 թ. հուլիսի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		3.4		8.1
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	167 388.4	12.8	178 474.4	16.1
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	33 666.7	0.6	35 745.0	4.1
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	264 921.9	6.7	281 698.3	9.1
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	168 058.6	10.2	180 963.9	14.9
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	644.4	4.8	659.6	-2.2
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	222 146[1]	5.4[2]	232 955[3]	7.8[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2019 թ.	*Գնաճ*	*Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը*	*Գների փոփոխությունը շինարարությունում*	*Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.8	-0.3	-3.3	4.5
Փետրվար	0.6	1.6	4.1	-2.8
Մարտ	0.1	0.7	-3.0	-0.9
Ապրիլ	-0.1	-3.5	1.7	-2.7
Մայիս	-0.4	-0.7	-0.7	-7.0
Հունիս	-1.9	-1.0	-0.3	-11.6
Հուլիս	-1.9	-1.0	0.5	-11.3
2019 թ. հունվար – հուլիսը 2018 թ. հունվար – հուլիսի նկատմամբ	1.9	0.0	-2.7	-3.8

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	2017	2018	2019
Նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.6	2.8	1.8
Փետրվար	-0.9	-0.5	0.6
Մարտ	-0.3	0.1	0.1
Ապրիլ	1.0	-0.3	-0.1
Մայիս	-0.2	-1.0	-0.4
Հունիս	-0.9	-1.6	-1.9
Հուլիս	-2.6	-1.2	-1.9
Օգոստոս	-0.4	0.6	
Սեպտեմբեր	0.2	0.3	
Հոկտեմբեր	0.8	0.1	
Նոյեմբեր	2.0	1.0	
Դեկտեմբեր	1.5	1.5	
Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	-0.6	2.9	0.8
Փետրվար	-0.2	3.3	1.9
Մարտ	-0.1	3.7	1.9
Ապրիլ	1.2	2.4	2.2
Մայիս	1.6	1.6	2.8
Հունիս	1.1	0.9	2.5
Հուլիս	0.9	2.3	1.7
Օգոստոս	0.9	3.3	
Սեպտեմբեր	1.0	3.5	
Հոկտեմբեր	1.2	2.8	
Նոյեմբեր	2.2	1.8	
Դեկտեմբեր	2.6	1.8	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՁԻՆ [5]

Անվանում	2019 թ. հուլիսը 2018 թ. հուլիսի նկատմամբ (%)	Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)
Գնաճ	**1.7**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	2.6	1.08
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	4.1	0.19
Հագուստ և կոշիկ	6.2	0.26
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.3	0.05
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	-0.1	0.00
Առողջապահություն	1.7	0.13
Տրանսպորտ	1.1	0.09
Կապ	-0.5	-0.03
Հանգիստ և մշակույթ	-1.3	-0.02
Կրթություն	1.4	0.02
Ռեստորաններ և հյուրանոցներ	1.1	0.02
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	0.3	0.02

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀ [5,6]

ժամանակաշրջան	2017	2018	2019
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.0	0.3	-0.2
Փետրվար	0.0	0.2	0.1
Մարտ	0.2	0.1	0.1
Ապրիլ	0.4	-0.1	0.0
Մայիս	0.2	-0.2	-0.1
Հունիս	0.0	-0.3	0.0
Հուլիս	-0.1	-0.3	-0.2
Օգոստոս	0.4	0.3	
Սեպտեմբեր	0.4	0.8	
Հոկտեմբեր	0.8	0.8	
Նոյեմբեր	0.7	0.2	
Դեկտեմբեր	0.3	0.0	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	-1.6	4.3	1.2
Փետրվար	-1.2	4.6	1.0
Մարտ	-0.9	4.3	0.9
Ապրիլ	-0.3	3.7	0.7
Մայիս	0.3	3.2	0.7
Հունիս	0.7	2.8	0.8
Հուլիս	0.9	2.5	0.8
Օգոստոս	1.3	2.4	
Սեպտեմբեր	1.6	2.7	
Հոկտեմբեր	1.9	2.5	
Նոյեմբեր	2.8	1.8	
Դեկտեմբեր	3.3	1.5	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

Անվանում	2019 թ. հուլիսը 2018 թ. հուլիսի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**0.8**	
Հավի միս	17.0	0.19
Հավի բուդ	14.5	0.11
Միս խոզի	-12.1	-0.08
Բուսական յուղ արևածաղկի	-7.4	-0.07
Ծխագլանակներ ֆիլտրով՝ այլ երկրների արտադրության	6.6	0.06
Պանիր տնական	-9.5	-0.06
Ալյուր ցորենի, բարձր տեսակի	4.9	0.06
Ծխագլանակներ ֆիլտրով՝ հայրենական արտադրության	6.8	0.05
Պանիր կովի կաթից	-3.2	-0.04
Կարագ սերուցքային	-3.6	-0.04
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար	5.3	0.04
Սրտաբանական ծառայություններ	7.9	0.04
Նրբերշիկ, սարդելկա	4.1	0.04
Օղի հայրենական արտադրության	7.4	0.04
Բենզին	5.4	0.03

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:
[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայված տվյալների հիման վրա:
[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:
[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:
[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:
[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամվանում	2019 թ. հունվար – հունիս (մլն ԱՄՆ դոլար)	2019 թ. հունվար – հունիսը 2018 թ. հունվար – հունիսի նկատմամբ (%)	2019 թ. հունվար – հուլիս (մլն ԱՄՆ դոլար)	2019 թ. հունվար – հուլիսը 2018 թ. հունվար – հուլիսի նկատմամբ (%)
Արտահանում *(ՖՕԲ)*	1173.8	99.5	1417.5	103.0
Ներմուծում *(ՍԻՖ)*	2321.4	98.7	2778.0	101.9
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1147.6	98.0	1360.5	97.9

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2018 թվական					
	Հուլիս			Հունվար – հուլիս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	111879	41398	70481	572976	236615	336361
ԱՄՆ	19753	13079	6674	115468	106413	9055
Ուկրաինա	853	988	-135	5390	8574	-3184
Ղազախստան	2770	220	2549	17103	1947	15156
Գերմանիա	3627	2204	1423	25180	29425	-4245
Իսպանիա	1957	1651	306	7531	9231	-1700
Ֆրանսիա	2342	1080	1262	32664	8771	23893
ԱՄԷ	3039	1357	1682	11950	13276	-1326
Չինաստան	483	4515	-4031	1970	30964	-28994
Թուրքիա	119	724	-604	1341	5447	-4106
Այլ երկրներ	32592	31291	1300	175408	183365	-7957
Ընդամենը	**179415**	**98507**	**80907**	**966982**	**634028**	**332953**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2019 թվական					
	Հուլիս			Հունվար – հուլիս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	111931	24591	87340	556135	232880	323255
ԱՄՆ	23281	33509	-10228	151067	163188	-12121
Ուկրաինա	1219	1646	-427	6464	8200	-1736
Ղազախստան	3166	487	2679	15312	2997	12315
Գերմանիա	3463	2313	1150	22763	16149	6614
Իսպանիա	926	1228	-301	6447	9622	-3174
Ֆրանսիա	2872	1260	1612	18964	8996	9968
ԱՄԷ	2294	1561	733	12420	10637	1783
Չինաստան	251	5187	-4936	2585	31015	-28430
Թուրքիա	170	816	-646	1232	5662	-4430
Այլ երկրներ	39096	71971	-32875	261866	291620	-29753
Ընդամենը	**188670**	**144570**	**44100**	**1055256**	**780966**	**274290**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2018 թվական					
	Հուլիս			Հունվար – հուլիս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	53863	19931	33932	276113	114001	162112
ԱՄՆ	9513	6297	3215	55655	51290	4365
Ուկրաինա	411	476	-65	2597	4130	-1533
Ղազախստան	1333	106	1227	8240	938	7302
Գերմանիա	1748	1061	686	12141	14188	-2047
Իսպանիա	944	795	149	3630	4447	-817
Ֆրանսիա	1128	520	608	15705	4226	11479
ԱՄԷ	1463	653	810	5756	6396	-639
Չինաստան	233	2174	-1941	949	14925	-13976
Թուրքիա	57	348	-291	647	2626	-1979
Այլ երկրներ	15690	15069	621	84531	88355	-3824
Ընդամենը	**86383**	**47430**	**38952**	**465965**	**305523**	**160442**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2019 թվական					
	Հուլիս			Հունվար – հուլիս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	53337	11718	41619	268235	112671	155565
ԱՄՆ	11094	15966	-4872	72940	78645	-5705
Ուկրաինա	581	784	-203	3118	3958	-840
Ղազախստան	1509	232	1277	7391	1446	5945
Գերմանիա	1650	1102	548	10992	7808	3184
Իսպանիա	441	585	-143	3114	4647	-1532
Ֆրանսիա	1368	600	768	9155	4347	4808
ԱՄԷ	1093	744	349	5992	5135	857
Չինաստան	120	2472	-2352	1250	14966	-13716
Թուրքիա	81	389	-308	595	2734	-2139
Այլ երկրներ	18624	34294	-15669	126406	140396	-13991
Ընդամենը	**89899**	**68887**	**21012**	**509187**	**376752**	**132435**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒԱՐԺԵՔ (Ի ՆԴԵՔՍ) [1,2,3]

2018	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	134.8	132.4	132.2	133.7	134.7	133.8	133.5	137.5	137.3	135.8	136.4	140.1
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	257.5	255.3	255.9	260.6	266.6	270.3	273.4	281.5	283.4	282.0	281.1	282.0
2019	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	141.8	140.9	140.7	141.4	142.6	139.4	136.6					
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	280.6	277.4	278.2	281.1	285.5	284.6	284.6					


[1] Հաշվարկում ընդգրկված են 12 գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով, 1997=100:
[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:
[3] Մեծը նշանակում է արժևորում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2018	2019						
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ
Համախառն միջազգային պահուստներ	**2259.3**	**1994.2**	**2074.3**	**2154.2**	**2150.7**	**2126.4**	**2220.4**	**2203.4**
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	6.0	5.0	3.5	2.1	2.1	35.6	11.6	3.4
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [2]	2253.4	1989.2	2070.8	2152.1	2148.6	2090.8	2208.9	2200.0

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*
[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*
[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2018	2019						
	Դ [2]	Հ	Փ	Մ[2]	Ա	Մ	Հ [2]	Հ
Համախառն արտաքին պարտավորություններ	**676.3**	**677.5**	**675.9**	**671.2**	**668.7**	**669.1**	**650.7**	**637.9**
ԱՄՀ վարկ	249.2	250.7	250.0	247.3	246.6	245.0	232.1	224.4
ՀՓԻ տեղաբաշխում	122.6	123.3	123.1	122.4	122.0	121.3	122.5	121.4
Այլ վարկեր	302.9	302.5	302.1	300.4	299.2	302.0	295.1	291.3
Այլ պարտավորություններ	1.7	1.0	0.8	1.1	0.9	0.9	1.0	0.9

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*

[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ	Պարտավորություններ Կառավարության նկատմամբ	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական պարտատոմսեր	Կառավարության ավանդներ և հաշիվներ (ներառյալ ԾԻԳ-երի միջոցները)	
2018			
Դեկտեմբեր[1]	13708	185968	**-172260**
2019			
Հունվար	13593	240215	**-226622**
Փետրվար	13437	232881	**-219444**
Մարտ	13538	229752	**-216214**
Ապրիլ	12192	247058	**-234865**
Մայիս	12396	250413	**-238017**
Հունիս	12431	288304	**-275873**
Հուլիս	12639	315057	**-302419**

[1] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա [1] *(մլրդ ՀՀ դրամ)*	Շրջանառությունում կանխիկ դրամ *(մլրդ ՀՀ դրամ)*	Ցպահանջ ավանդներ դրամով *(մլրդ ՀՀ դրամ)*	M1 [2] *(մլրդ ՀՀ դրամ)*	Ժամկետային ավանդներ դրամով *(մլրդ ՀՀ դրամ)*	M2 [3] *(մլրդ ՀՀ դրամ)*	Արտարժույթով ավանդներ *(մլրդ ՀՀ դրամ)*	M2X [4] *(մլրդ ՀՀ դրամ)*	Փողի բազմապատկիչ [5]	Դրամային բազմապատկիչ [6]
2018										
Դեկտեմբեր	1215585	476996	418276	895272	671552	1566824	1208271	2775095	2.28	1.63
2019										
Հունվար	1068346	440502	406887	847389	686214	1533602	1193930	2727532	2.55	1.64
Փետրվար	1117143	439845	408665	848510	709551	1558061	1201436	2759497	2.47	1.68
Մարտ	1195608	434436	408860	843296	720887	1564183	1185961	2750144	2.30	1.65
Ապրիլ	1199427	427914	405274	833188	738350	1571538	1192757	2764294	2.30	1.61
Մայիս	1123012	427820	410541	838361	758690	1597051	1204918	2801969	2.50	1.75
Հունիս	1128916	442130	395646	837777	772673	1610449	1182359	2792809	2.47	1.79
Հուլիս	1085049	461747	405663	867410	781805	1649215	1178430	2827645	2.61	1.86

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
1,250,000
1,000,000
750,000
500,000
250,000
0
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
3,000,000
2,500,000
2,000,000
1,500,000
1,000,000
500,000
0
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
25
20
15
10



Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
45
40
35
30
25


ՄԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]


մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2018					
Հունվար	970525	418352	744172	1349215	2534434
Փետրվար	980089	421422	746124	1358690	2536578
Մարտ	993992	425208	764179	1383566	2566415
Ապրիլ	915814	425189	760468	1376397	2530276
Մայիս	972578	434829	780606	1407104	2557946
Հունիս	1019346	443758	787793	1416594	2584117
Հուլիս	1017499	443262	796799	1431800	2610384
Օգոստոս	1006790	445636	804282	1447024	2624676
Սեպտեմբեր	1091250	448504	820746	1466735	2655081
Հոկտեմբեր	1048304	450764	828612	1484878	2669036
Նոյեմբեր	1089159	451361	836401	1498392	2685982
Դեկտեմբեր	1073606	449328	840345	1524031	2700747
2019					
Հունվար	1064105	450879	853273	1542510	2715349
Փետրվար	1114791	457934	864959	1563144	2753929
Մարտ	1156139	456615	859509	1570161	2754012
Ապրիլ	1244641	446983	865871	1586547	2784044
Մայիս	1188113	439823	864886	1609563	2828848
Հունիս	1171200	441278	851681	1617993	2820863
Հուլիս	1109023	447922	849968	1629290	2819137

[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով, ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի տարվա առաջին համարում: Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
1,300,000
1,200,000
1,100,000
1,000,000
900,000
800,000
700,000
600,000
500,000
Փողի բազայի փաստացի շարքեր
Փողի բազայի հարթեցված շարքեր


Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
510,000
460,000
410,000
360,000
310,000
260,000
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի շարքեր
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի հարթեցված շարքեր


Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
1,900,000
1,700,000
1,500,000
1,300,000
1,100,000
900,000
700,000
500,000
Դրամային զանգվածի փաստացի շարքեր
Դրամային զանգվածի հարթեցված շարքեր


Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
3,000,000
2,800,000
2,600,000
2,400,000
2,200,000
2,000,000
1,800,000
1,600,000
1,400,000
1,200,000
1,000,000
Փողի զանգվածի փաստացի շարքեր
Փողի զանգվածի հարթեցված շարքեր

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2018	2019						
	Դ [2]	Հ	Փ	Մ[2]	Ա	Մ	Հ[2]	Հ
(Մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)								
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***765792***	***641240***	***684789***	***721406***	***712083***	***699662***	***748906***	***744868***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***449794***	***427106***	***432354***	***474202***	***487344***	***423350***	***380010***	***340181***
Կառավարություն	-172260	-226622	-219444	-216214	-234865	-238017	-275873	-302419
Բանկեր	299069	326280	326769	364324	404016	329304	325230	307457
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	163433	180879	180074	220323	260627	190558	190643	170339
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոպ	5351	0	0	0	0	0	0	0
Դրամական միջոցների ներգրավում (-)	-12306	0	0	0	0	-6001	-5002	-4401
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	0	0	0	0	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոպ (-)	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	322985	327449	325029	326092	318193	332063	330653	335142
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***1215585***	***1068346***	***1117143***	***1195608***	***1199427***	***1123012***	***1128916***	***1085049***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	566706	506946	505126	503301	502657	499899	515343	534264
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	351870	378781	369895	384621	422464	364522	346395	315227
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	244798	123751	183123	243170	215173	202508	219727	189839
Այլ հաշիվներ	52211	58868	58998	64516	59132	56083	47451	45718
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	40796	47275	53756	59262	53789	48635	40128	36351
Այլ հաշիվներ արտարժույթով	11415	11593	5242	5254	5343	7448	7322	9367
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)								
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-124552***	***43549***	***36617***	***-9323***	***-12421***	***49244***	***-4038***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-22687***	***5248***	***41848***	***13142***	***-63994***	***-43340***	***-39829***
Կառավարություն	-	-54362	7178	3231	-18652	-3152	-37856	-26546
Բանկեր	-	27210	490	37554	39693	-74712	-4074	-17772
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	17446	-805	40249	40304	-70069	85	-20304
Դրամական միջոցների ներգրավում (-)	-	-12306	0	0	0	6001	-999	-601
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	-	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	4464	-2420	1063	-7899	13870	-1410	4489
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-147240***	***48797***	***78465***	***3819***	***-76415***	***5904***	***-43867***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-59761	-1819	-1826	-643	-2759	15445	18921
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	26912	-8886	14725	37844	-57942	-18127	-31168
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-121047	59372	60047	-27998	-12664	17219	-29887
Այլ հաշիվներ	-	6657	130	5518	-5384	-3049	-8633	-1733
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	-	6479	6481	5505	-5472	-5154	-8506	-3777
Այլ հաշիվներ արտարժույթով	-	178	-6351	13	89	2105	-126	2045
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)								
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-16.3***	***6.8***	***5.3***	***-1.3***	***-1.7***	***7.0***	***-0.5***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-5.0***	***1.2***	***9.7***	***2.8***	***-13.1***	***-10.2***	***-10.5***
Կառավարություն	-	-31.6	3.2	1.5	-8.6	-1.3	-15.9	-9.6
Բանկեր	-	9.1	0.2	11.5	10.9	-18.5	-1.2	-5.5
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	1.4	-0.7	0.3	-2.4	4.4	-0.4	1.4
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-12.1***	***4.6***	***7.0***	***0.3***	***-6.4***	***0.5***	***-3.9***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-10.5	-0.4	-0.4	-0.1	-0.5	3.1	3.7
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	7.6	-2.3	4.0	9.8	-13.7	-5.0	-9.0
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-49.4	48.0	32.8	-11.5	-5.9	8.5	-13.6
Այլ հաշիվներ	-	12.7	0.2	9.4	-8.3	-5.2	-15.4	-3.7

[1] Զուտ միջազգային պահուստներն (ԶՄՊ) իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: ԶՄՊ-երը հաշվարկված են փաստացի փոխարժեքներով:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2018	2019						
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-852445**	**-747581**	**-830956**	**-879544**	**-830784**	**-837424**	**-894631**	**-878913**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	416508	545444	499994	450271	518400	543356	508231	541081
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-1101765	-1123876	-1155841	-1147150	-1163463	-1193304	-1206199	-1215251
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-167188	-169149	-175109	-182665	-185721	-187477	-196664	-204742
ԶՆԱ	**3129845**	**2998949**	**3110938**	**3139551**	**3113411**	**3160408**	**3204861**	**3206153**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	505901	496111	509471	541679	517838	522971	538015	543803
Պահանջներ Կառավարության նկատմամբ	539890	531316	543568	575329	555080	561688	575303	579723
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-33990	-35205	-34098	-33650	-37242	-38717	-37288	-35920
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	430443	288048	331345	371335	354955	351936	352240	309751
Պահանջներ ԿԲ նկատմամբ	697046	573937	616669	693246	715981	643188	642154	580058
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ (-)	-266603	-285889	-285324	-321911	-361026	-291252	-289914	-270307
Տնտեսություն	3015024	3030507	3094433	3091053	3134281	3162289	3198156	3244265
Ձեռնարկություններ	1642773	1641912	1677211	1642063	1631966	1640644	1650814	1644443
Դրամով	360352	357434	358273	361827	363468	366334	365336	365154
Արտարժույթով	1218675	1219197	1253548	1213811	1203455	1209902	1218728	1211180
Արժեթղթեր	63746	65281	65390	66425	65043	64408	66749	68109
Տնային տնտեսություններ	1153271	1169452	1193752	1224420	1270826	1291284	1317705	1343021
Դրամով	852393	871136	895459	925002	973405	988123	1007745	1029972
Արտարժույթով	300878	298316	298294	299419	297421	303161	309960	313049
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	120347	118612	118430	112048	111458	111242	110989	110586
